

Հ.Զ. ՂԱԶԱՐՅԱՆ

ՀՈՒՅՍ, ՀՈՒՍԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ, ՍՊԱՍՈՒՄ, ՆԱԽԱԶԳԱՑՈՒՄ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՇՏԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ, ՌՈՒՍԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

Դիտարկվում են հայերենի, ռուսերենի և անգլերենի *հոյս*, *հուսահատություն*, *սպասում*, *նախազգացում* արտահայտող դարձվածքների իմաստային, կառուցվածքային, քերականական, ոճական առանձնահատկությունները: Զուգադրվում, բացահայտվում են նշված լեզուների դարձվածքների առանձնահատկությունների ընդհանրություններն ու տարբերությունները, որոնք իրենց հերթին նպաստում են դիտարկվող լեզուները կրող ժողովուրդների լեզվամտածողության ընդհանրությունների և տարբերությունների բացահայտմանը:

Առանցքային բառեր. դարձվածք, իմաստ, առանձնահատկություն, ընդհանրություն, տարբերություն, լեզվամտածողություն:

Զգացմունք եզրույթը ներառում է մարդու հոգևոր կյանքի խիստ ընդարձակ և բազմազան ոլորտը, որին բնորոշ են բազմաթիվ վիճակներ, ապրումներ և մղումներ, ինչպիսիք են ուրախությունն ու տխրությունը, հույսն ու հուսահատությունը, անհանգստությունն ու նվիրվածությունը, հարգանքը, հիացմունքն ու վիշտը, վիրավորանքն ու արհամարհանքը, սերն ու ատելությունը և այլն:

Մարդու զգացմունքները բազմազան են, քանի որ բազմազան են նաև նրա հարաբերություններն այն իրականության հետ, որում նա ապրում է: Զգացմունքների բազմազանությունն արդյունք է նաև այն բանի, որ բնույթով իրար մոտիկ զգացմունքները միմյանցից տարբերվում են ապրումների ուժգնության աստիճանով և հուզական գունավորման երանգներով: Ուժգնության այս աստիճանավորումն էլ ավելի է մեծացնում զգացմունքների բազմազանությունը: Օրինակ, վախի զգացմունքի աստիճանավորումը երկյուղից մինչև սարսափ դիտարկելով՝ կարելի է նկատել, որ զգացմունքի ուժգնությունն անկրկնելի է դարձնում ապրումը [1]:

Մարդու զգացմունքների արտահայտման մասին կարող ենք դատել նրա խոսքով, բառերով, երբ նա անմիջականորեն բացահայտում է դրանց բովանդակությունը կամ խոսում է հենց այն առարկայի մասին, որի վերաբերյալ առաջացրել է համապատասխան զգացմունքը: Մարդն իր զգացմունքների մասին կարող է հաղորդել նաև մեկ այլ անձի բառերով (երբեմն քողարկելով իր իրական զգացմունքները) ոչ կամավոր դիմախաղային և մնջախաղային շարժումներով, ինչպես նաև խոսքի հնչերանգով:

Բացի վերը նշված միջոցներից (վերաբերմունք, վարք, դիմախաղ, բառեր և այլն), անձն իր զգացմունքներն արտահայտում է նաև լեզվի պատկերավոր միջոցներով՝ կայուն բառակապակցություններով և դարձվածքային միավորներով, որոնք տվյալ զգացմունքն ավելի արտահայտիչ ու տպավորիչ են դարձնում:

Դարձվածային միավորների ձևավորումը պայմանավորված է տվյալ ժողովրդի լեզվամտածողության զարգացման ավելի բարձր մակարդակով, երբ լեզվում հնարավոր է դառնում վերացարկումներ կատարել: Այլ կերպ ասած՝ դարձվածքն առաջանում է մարդու՝ աշխարհաճանաչողության և գործունեության համեմատաբար ավելի բարձր աստիճանում՝ պայմանավորված հասարակական կյանքի գիտակցմամբ և ընկալմամբ: Իրերի և երևույթների բազմակողմանի ճանաչումն ու վերլուծությունը, դրանց առավել էական կողմերի բացահայտումը հիմք են հանդիսանում բառակապակցության արտահայտած հասկացությունների վերախմաստավորման համար [2]: Կապակցության վերախմաստավորումը, որը կարող է տեղի ունենալ որպես պարզ փոխաբերություն, տեղափոխում է տվյալ հասկացությունը իմաստային մեկ այլ դաշտ [3]:

Լեզվաբանության մեջ իմաստային դաշտը տարբեր խոսքի մասերին պատկանող, սակայն մեկ ամբողջական հասկացություն արտահայտող բառերի ամբողջություն է [4]: Միևնույն հասկացությունը կարող է մի դեպքում արտահայտվել բառով, մյուս դեպքում դարձվածքային միավորով: Իմաստային դաշտերում դարձվածքներն ընդգրկվում են ըստ իրենց բաղադրիչների արտահայտած ընդհանուր իմաստի՝ անկախ իրենց քերականական, կառուցվածքային, ոճական և այլ առանձնահատկություններից:

Սույն հոդվածի նպատակը հայերենի, ռուսերենի և անգլերենի *հոյս*, *հուսահատություն*, *սպասում*, *նախազգացում* արտահայտող դարձվածքների իմաստային դաշտի զուգադրումն ու վերլուծությունն է:

Հոյսը հոգեկան մի վիճակ է, որն ապահովում է համոզմունքը դրական այն արդյունքի հանդեպ, որը կապված է մեկի կյանքի հանգամանքների կամ որոշ իրադարձությունների հետ: Դա այն զգացմունքն է, ըստ որի ցանկությունը կարող է իրականություն դառնալ, կամ իրադարձությունները լավ ավարտ կունենան, սպասելիքները կարողարանան: Ինչպես ասել է Ալեքսանդր Դյուման՝ «Աշխարհի իմաստնությունը պարփակված է երկու բառի մեջ՝ «սպասել» և «հուսալ»:

Հուսախաբությունը անբավարարվածության զգացումն է, որը հետևում է սպասումների կամ հույսերի ձախողմանը: Հուսախաբ մարդը կենտրոնանում է իր սպասումների և դրանց իրագործման արդյունքի վրա: Հուսախաբությունն ու հուսահատությունը հոգեբանական սթրեսի աղբյուր են: Հուսախաբությունը սուբյեկտիվ արձագանք է՝ կապված սպասվող հատուցման հետ:

Դիտարկվող լեզուներում նկատվում են հույս, հուսահատություն, սպասում արտահայտող դարձվածքներ: Բերենք մի քանիսը:

Սիրտը կտորել – Վշտացնել, հուսահատեցնել, ընկճել, վիատեցնել, սրտաբեկ անել: *Նրա քույրը շար ստիպեց նրան չկտորել երեխեքանց սիրտը, բայց նա լսել անգամ չուզեց* (ՊՀ, 85): *Աման է՝ կտորեց, նորը կառնենք, բայց Լուսիկի սիրտը որ կտորենք, հետո ի՞նչ անենք* (ԹԵ, V, 202):

Սիրտը խորտակ(վ)ել – Հուսահատեցնել մեկին, ցավ, վիշտ պատճառել, հուսախաբել: *Վիշտը ճնշեց սիրտս քնքուշ – Նա խորտակվեց դառնապես* (ԻԵ, I, 5):

Սրտում պահել / փայփայել – Հույս ունենալ: *Նա դեռ պահում էր սրտում մի թույլ հույս փողեղը գտնելու* (ՇԵ, 459): *«Անշուշտ մի բան կա նրա սրտի մեջ» փայփայում էր Ջոհրակը այս միտքը իր սրտում* (ԴՎ, 833):

Աչքը / աչքերը ջուր անել / դառնալ / կտրել / մաղվել – Ակնդետ նայել, կարոտով՝ անհամբեր սպասել, լալով՝ արտասվելով շատ երկար սպասել: *Նրա հորն օղորմի, հերիք չէ, որ սաղ միայն ազգայինների աչքը ջուր ա կտրացրել, Խեչանի ծովի պես հարստությունի տերն ա դառել, հիմի էլ չէիր ուզի՛ որ գլխներիս նստեցնենք* [ՊՀ, 67]:

Աչքը ճամփին / ճանապարհին մնալ / լինել / թողնել – Մեկին անհամբեր՝ շարունակ սպասել: *Դու մի սաիլ՝ թագավորի տղի աչքն էլ հենց ճամփին է լինում* (ԹԵ, V, 383): *Գիշեր-ցերեկ գրկված քնից՝ ծով է կտրում աչքս ճամփին* (Իս., I, 13):

Թևաթափ անել (փխբ.) – Մեկին հուսահատեցնել, ընկճել: *Չի կարելի երիտասարդին թևաթափ անել, ընդհակառակը՝ պեպք ' հույս տալ* (ՀԼԴԲ, 233):

Ձեռքը-ուտքը թուլանալ (փխբ.) – 1. Շվարել, լքվել, հուսահատվել: *Որդու սև թուղթը ձեռքին քարացել – ձեռքը-ուտքը թուլացել, չէր իմանում ինչ անի* (ՀԼԴԲ, 388):

Ականջը ձայնի / լինել / մնալ / պահել – Սպասողական վիճակում (լինել), լուրի սպասել, մեկից լուր՝ տեղեկություն ակնկալել: *Բայց շուտով քնել չկարողացա, որովհետև ականջս շարունակ ձենի էր* (ՆՊ, 287):

Դանակը ոսկորին հասցնել – Մեկին համբերությունից հանել, հուսահատեցնել: *Էգուց-էլօր դանակն ոսկորին կհասցնենք, դատավորը կիմանա ու էն ժամանակը ձեզ հոգվով-մարմնով պրծում չկա* (ՊՀ, 168):

Մեջքի հոռը կտորվել (բբ.) (փխբ.) – Անդառնալի կորստի հանդիպել, ընկճվել: *Մարդուս սև թուղթը որ սրացանք, մեջքիս հոռը կտորվեց* (ՀԼԴԲ):

Գլուխը տափին տալ (բբ.) – Խոր հուսահատությունից չիմանալ ինչ անել, գլուխը ողբալ: *Որտեղ թաղեմ ես իմ դարդը, Չոր գլուխս տափին տալով* (ՀԼԴԲ, 166):

Աչքը ուրիշի ձեռքը մնալ – Ակնկալիք ունենալ, օգնություն ստանալու հույս ունենալ: *Ջարմանայի մարդիկ են, չեն ուզում աշխատել ու աչքները միշտ ուրիշի ձեռքին են:*

Ականջը կախ – 1. Արթուն, ուշադիր, զգոն, սպասողական վիճակում: *Երիտասարդը, նստած իր անկյունում, ականջը կախ լսում էր փխրանուշ մեղեդին:*

Լերդն ու թոքը չորանալ – Սպասել կարոտով: *Ուխտավորների թոզը քիչ-քիչ մոտենում էր, ողորմելի երիտասարդների լերդն ու թոքը չորանում (ՀԼԴԲ, 270):*

Ականջը դուրսը կամ դրսում – Մի բանի անհամբեր սպասող, սպասողական վիճակում գտնվող: *Չնայած գերզբաղվածությանը՝ նրա ականջը դրսում էր:*

Պոռը պատռ(վ)ել – Սաստիկ կարոտել: *Երեխեքին տեսնելու համար պոռը պատռում էր (ՀԼԴԲ, 526):*

Թևաթափ լինել – Հուսահատվել, ընկճվել: *Մի տեսակ թևաթափ ես լինում: Ամբողջ ուժերդ հավաքում, գործի ես կաշում ու հանկարծ պատրի ես դեմ առնում:*

Схватить себя за волосы – Անզորությունից գլուխը բռնել, հուսահատ լինել: *А он вошел в соседнюю комнату, молча сел на диван и схватил себя за волосы.*

Рвать на себе волосы – Հուսահատվել, մազերը փետել: *А главное, ты бы на другой день стал рвать на себе волосы с отчаяния и тотчас охладел бы к своей возлюбленной... (Гонч., 33).*

Опускать / опустить крылья / крылышки – Հուսահատվել: *Все думали, что Марья Александровна падет духом, унижится, будет просить, умолять, одним словом, отпустит свои крылышки (РАФРС, 300) Дост.).*

Lose heart (բառացի՝ սիրտ կորցնել) – Հուսահատվել, կորցնել հոգու քաջությունը: *He fell, and the garrison who had been sustained by his courage last heart and surrendered (ERPhD, 375).*

Break one's heart (բառացի՝ կտրել իր սիրտը) – Հուսահատվել, վհասվել: *But would she break her heart if he went East or West tomorrow (GJW, 23).*

One's heart sinks (բառացի՝ մեկի սիրտը խորտակվում է) – Մեկը հուսահատվում է: *His heart sank at the sight of her (CAC, 362).*

Hang (down) one's head – Գլուխը հակել, կախել, հուսահատվել: *She hung her head. She was annoyed with herself.*

A smack in the eye (խսկ) – Հարված, ապտակ, խոր հիասթափություն: *“It'll be a smack in the eye for me.” Jones smiled (ERPhD, 216).*

Break sb's heart (բառացի՝ սիրտը կտրել) – Հուսահատեցնել մեկին: *Indeed it breaks my heart to think we couldn't have got married before ye left (CAH,96). “I should not like to break her heart”, Ruth said previously (LJM, 201).*

Հույս, հուսահատություն, սպասում արտահայտող դարձվածքների շարքում նկատելի են այնպիսիք, որ օժտված են իմաստային որոշ նրբերանգներով: Հուսահատության, ընկճվածության ու վհատության նրբիմաստներն առկա են բոլոր լեզուներում: Ինչ-ինչ հանգամանքների պատճառով շփոթված, անզոր վիճակի մեջ լինելու նրբերանգը նկատվում է հայերենում և ռուսերենում՝ **ծեռքը – ոտքը թուլանալ, գլուխը տափին տալ, գլուխը / մազերը բռնել, схватить себя за волосы** - Խոր հիասթափության, անհուսալի վիճակում հայտնվելու նրբիմաստները՝ համապատասխանաբար անգլերենում՝ **a smack in the eye** և ռուսերենում՝ **почва уходит из-под ног**: Վշտանալու, համբերության կորստի նրբիմաստները նկատելի են միայն հայերենի դարձվածքներում՝ **դանակը ոսկորին հասցնել, սիրտը խորտակ(վ)ել**: Կորստի, սպասման իմաստները նույնպես առկա են միայն հայերենում:

Իմաստային այս դաշտում դիտարկվել են նաև նախազգացում արտահայտող մի շարք դարձվածքներ:

Նախազգացումը մարդու ներքին զգացողությունն է՝ ապագայում կատարվելիք որևէ իրադարձության վերաբերյալ: Այն կապված է ինտուիտիվ զգացողության, մարդու հոգեկան աշխարհում կատարվող երևույթների, ինչպես նաև նախապաշարմունքների հետ: Նախազգացման բնույթը կարող է լինել թե՛ դրական, թե՛ բացասական: Դա կարող է լինել ինչպես ֆիզիկական զգացողությունների, այնպես էլ մտավոր և հոգեկան ընկալումների, զգացումների հետևանք: Հարկ է նշել, որ տարբեր ժողովուրդների մոտ նախազգացումը կարող է արտահայտվել տարբեր զգացումներով և ընկալումներով: Բերենք հիշյալ իմաստով մի քանի դարձվածք:

Ականջը խոսել/կանչել/զրնգալ/ծվալ – Նախազգալ, գուշակել: *Քիչ մը առաջ նշանտուրքը ըրինք, կենացդ ալ գավաթ պարպեցինք... ականջդ չխոսեցա՞վ* (ՕԵ, 359):

Աչքը վախենալ – Կանխազգալ, որ մի բան չի կարող կատարվել՝ գլուխ բերվել կամ վտանգ կգա դրանից: – *Հայ գիդի, նանի, աչքդ ոնց վախեցել ա* (ՆՊ, 86):

Մատից հոտ քաշել – Կանխազգալ, գուշակել: *Անուշիկս, ես հոս նստած տեղս մա՞րս կհոտվորամ, որ հասկանամ ժամուն մեջ անցած դարձածը* (ՕԵ, 136):

Սիրտը կարդալ – ներքին ապրումները, մտածմունքը հասկանալ, իմանալ: *Այս ամենը հասկանում էր իշխան Մարգպետունին, կարդում էր նրա սիրտը յուր իսկ դեմքի վրա* (ՄԳ, 337):

Սիրտը տուն տալ – Նախազգալ: *Իմ սիրտս տուն ա տալիս, որ մի խոսքս սուտ չպիտի ըլնի* (ՊԼ, 326):

Սիրտը վկայել – Նախազգալ, կանխագուշակել: - *Սիրտս վկայում է, որ այդ թղթերը պետք է քո գլխին մի փորձանք բերեն (ՇԵ, 315): Եվ եթե սիրտդ վկայում է, որ մի օր պիտի կապվիս մեկի հետ, այդ մեկը սա է (ԴՎ, 71):*

Սիրտը ասել – Նախազգալ, կանխազգալ: - *Սիրտս ասում է վեր կաց գնա Հնդստանից եկող Շահի քարվանը կտրի, բեր փունը լցրու (ԹԵ, V, 235):*

Հոգու աչքեր – Ներըմբռնում, ներգագսողություն: *Ես հոգուս աչքով՝ անցած ու ներկա վիճակդ եմ տեսնում հենված մի սյունի (ԻԵ, I, 382): - Եթե մինչև անգամ զուրկ լինեի այդ պիտանի զգայարանից, այնուամենայնիվ կարող էի դարձյալ իմ հոգվո աչքերով գտնել այն ճանապարհը, որ հանում է դեպի Գարդմանա իշխանի դղյակը (ՄԳ, 105):*

Մտքի աչք – Ներքին զգացողություն: *Ինձ մեղադրում էին այն բանում, որ ես մտքի աչքեր չունեմ, խավարն ու լույսը չեմ տարբերում, սակայն պարզվեց հակառակը (ՀԼԴԲ, 443):*

Սիրտը կծել – Կանխազգալ: *Կարծես թե մի բան սիրտս կծեց, թե վաղ բան պիտի պատահի (ՀԼԴԲ, 527):*

Աչքը / աչքերը պաղել / սառել - 1. Աչքերը հատելով անթարթ նայել, ինչը որևէ մարդու գալստյան նախագուշակություն է համարվում: *Շատ աղեկ ըրիր: Իմ ալ աչքս կպաղեր կոր (ՕԵ, 361):* 2. Հեզանկան իմաստով՝ բոլորովին չսպասել, կարոտ չզգալ:

Աչքը / աչքերը / աչքի կոպը խաղալ – 1 Աչքի կոպը շարժվել, որ ըստ սնոտիապաշտական հավատալիքների համարվում է լավ կամ վատ բան կատարվելու նախանշան: *Աչ աչքիս վերին կոպը հենց սկսեց խաղալ թե չէ, գզիրը փուն ընկավ (ՊՀ, 13):*

С тяжелым сердцем – Ճնշված վիճակում, չարիք գուշակելով: *Я снял фуражку и, помявшись немного на месте, пошёл прочь с тяжёлым сердцем (ՏԻՏ, 38).*

Отрывается от сердца (հնգ.) – Հանկարծ տագնապալի վտանգի, դժբախտության զգացողություն է առաջանում: *Часто он кричать начал, всё больше на Матерну, а то и на меня; а как закричит, у меня тотчас ноги мертвеют и от сердца отрывается (ԴՓՄ, 183).*

Читать в сердце – Գուշակել մեկի մտքերը: *Она смотрела на него словно читая в сердце.*

Чуять сердцем – Զգալ, կանխազգալ: *“Маменька сердцем чуяла отдаленное горе”, - думал он (ԴԻՕ, 228).*

A feelling in the bones (բառացի՝ զգացում ոսկորներում) – Ինտուիցիա, զգալ ամբողջ արտով: *We shall meet again sometime. I feel it in my bones (ԵՐՓԴ, 118).*

Hit the right nail on the head - ճիշտ գուշակել: “*Al, you’ve hit the right nail on the right head*” Caldwell said, and moves to turn away (ERPhD, 524).

Ինչպես նկատում ենք, նախագագացում արտահայտող դարձվածքները ևս, իրենց ընդհանուր իմաստի հետ միասին, արտահայտում են նաև որոշ նրբիմաստներ՝ ներըմբռնման, լավ կամ վատ բանի զգացողության, գուշակության և այլն:

Բաղադրիչների միասնության առումով՝ դաշտում տեղ գտած դարձվածքները դարձվածքային սերտաճումներ և միասնություններ են՝ անփոփոխելի և անօտարելի բաղադրիչներով: Կապակցությունների գերակշիռ մասը մենիմաստ են (երկիմաստ և բազմիմաստ դարձվածքներն այստեղ դիտարկվել են միայն տվյալ դաշտին բնորոշ իմաստներով (**ականջը կախ, աչքի կոպը խաղալ**)):

Ուսումնասիրված դարձվածքները պատկանում են կառուցվածքային տարբեր տիպերի: Բոլոր երեք լեզուներում առկա են երկանդամ և եռանդամ կառույցներ, քառանդամ կառույցներ նկատելի են միայն հայերենում և ռուսերենում: Հայերենում տեղ են գտել նաև հարադրություն և համադասական կառույց պարունակող կապակցություններ՝ **ձեռքը-ոտքը թուլանալ, լերդն ու թուքը չորանալ**: Երեք լեզուներում դարձվածքների մեծ մասը բայական են: Հայերենում և անգլերենում նկատելի են գոյականական, հայերենում՝ ածականական, ռուսերենում՝ մակբայական, ռուսերենում և անգլերենում՝ հաղորդակցական դարձվածքներ: Որոշ դեպքերում, անորոշ դերբայով ծավալվելիս, անվանական կառույցները կարող են վերածվել բայականի:

Դարձվածքներում գործում են քերականական կարգեր. անվանական՝ առկայացման, թվի, հոլովի, և բայական՝ դեմքի, թվի եղանակի, ժամանակի, սեռի: Այս կարգերից մի քանիսը, որոշ դեպքերում, ունեն իմաստազատիչ դեր, այսինքն, եթե քերականական հիշյալ կարգերն օգտագործվեն այլ ձևով, ապա դարձվածքները կզրկվեն իրենց իմաստից (երբեմն տվյալ նրբիմաստից), մյուս կարգերն օժտված չեն նման դերով:

Դարձվածքների գլխավոր անդամը, շարահյուսության տեսակետից, տարբեր է՝ կախված կառուցվածքային տիպից: Ինչ վերաբերում է գլխավոր անդամին իմաստային առումով, ապա դարձվածքների առանցքային անդամը մարմնի մասի անվանումն է, որն անօտարելի և անփոփոխելի է:

Դիտարկված դարձվածքների շարքում տեղ են գտել մի շարք դարձվածքային տարբերակներ՝ **սրտում պահել/փայփայել** (բառային), **աչքը/աչքերը ջուր անել/դառնալ/կտրել/մաղվել** (բ.բ.), **աչքը ճամփին/ճանապարհին մնալ/լինել/թողնել** (բառ.), **ականջը դուրսը/դրսում (քեր.)**, **սիրտը կտրել/կտրվել (քեր.)**, **աչքը/աչքերը պաղել/սառել** (քեր., բառ.), **աչքը/աչքերը/աչքի կոպը**

խաղալ (քեր., բառ.), **опускаться, опустить крылья, крылышки** (բառային), **hang (down) one's head** (քերականական), **hit the (right) nail on the head** (քանական):

Դարձվածքների յուրաքանչյուր խմբի միավորներն ընդհանուր իմաստով հոմանիշ դարձվածքներ են (նույնիսկ կարելի է համարել, որ նախազգացումն էլ է ապաստում), սակայն ըստ նրբիմաստների նկատելի են մի քանի հոմանիշային շարքեր՝ **սիրտը կոտրվել – սիրտը խորտակվել – թևաթափ անել/լինել – դանակը ոսկորին հասցնել – ձեռքը-ոտքը թուլանալ – մեջքի հոռը կոտրվել; աչքը/աչքերը ջուր անել/դառնալ/կտրել/մարել – աչքը ճամփին մնալ/լինել/թողնել – լերդն ու թոքը չորանալ – ականջը դուրսը – պոռոչը պատռվել; աչքը ուրիշի ձեռքը մնալ; մտքի աչք – հոգու աչքեր; ականջը ծվալ – մատից հոտ քաշել – սիրտը տուն տալ – աչքը խաղալ – աչքը վախենալ – աչքերը պաղել – սիրտը վկայել – սիրտը ասել – սիրտը կծել; схватить себя за волосы – опускаться, опустить крылья; чують сердцем – с тяжелым сердцем – отрываться от сердца; lose heart – break one's heart – one's heart sinks – hang down one's head.**

Դարձվածքների երկու խմբերում հականիշ դարձվածքներ չկան: Միայն որոշ դեպքերում, կախված դարձվածքների սեռաիմաստային առանձնահատկություններից, կարելի է առանձնացնել հակադիր իմաստ արտահայտող կապակցություններ՝ **սիրտը կոտրել – սիրտը կոտրվել, սիրտը խորտակել – սիրտը խորտակվել, աչքը ճամփին մնալ – աչքը ճամփին թողնել, թևաթափ անել – թևաթափ լինել, break one's heart – break sb's heart** (անգլերենում իմաստային հակադրությունն արտահայտվում է դերանուններով):

Դիտարկված դարձվածքները հիմնականում օգտագործվում են ժողովրդախոսակցական լեզվում, գրքային ոճում, մեկ-երկուսը՝ բարբառներում՝ **մեջքի հոռը կոտրվել, գլուխը տափին տալ** և այլն: Դրանցով հարուստ է նաև գեղարվեստական գրականությունը:

Դարձվածքների մեծ մասը հատուկ է միայն այս կամ այն լեզվին, սակայն հանդիպում են նաև մյուս մեկ կամ երկու լեզուներում իրենց համարժեքներն ունեցող միավորներ՝ **սիրտը կոտրել – break sb's heart; սիրտը կոտրվել – break one's heart; մազերը/գլուխը բռնել – схватить себя за волосы; թևաթափ լինել – опустить крылья; սիրտը խորտակվել – one's heart sinks; գլուխը կախել – опустить голову – hang one's head; սիրտը կարդալ – читать в сердце; ծանր սրտով – с тяжелым сердцем; սրտով զգալ – чують сердцем.**

Այսպիսով, վերլուծությունը ցույց է տալիս, որ հայերենի, ռուսերենի և անգլերենի *հոյս, հուսահատություն, սպասում, նախազգացում* արտահայտող

դարձվածքների իմաստային, կառուցվածքային, քերականական, ոճական առանձնահատկություններն ունեն և՛ ընդհանրություններ, և՛ տարբերություններ, ինչն իր հերթին վկայում է հիշյալ լեզուները կրող ժողովուրդների լեզվամտածողության ընդհանրությունների և տարբերությունների մասին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Якобсон.** Психология чувств, М., 1961, с. 61.
2. **Բաղիկյան Խ.,** Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Ե., 1986, 354 էջ:
3. **Բեդիրյան Պ.,** Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, «Լույս» հրատ., Ե., 1973, 231 էջ:
4. **Вердиева З. Н.** Семантические поля в современном английском языке, М., 1986. С. 4-12.
5. **ՊՇ - Պողոսյան Պ.,** Հացի խնդիր, Երևան, Հայաստան հրատ., 1968:
6. **ԹԵ - Թումանյան Հովհ.,** Երկերի լիակատար ժողովածու, հատ. 1-10, հ. 5, Երևան, Հայաստանի ԳԱ հրատ., 1994:
7. **ԻԵ - Իսահակյան Ա.,** Երկերի ժողովածու 6 հատորով, Երևան, «Հայաստան» հրատ., 1973-1979:
8. **ՇԵ - Շիրվանզադե Ա.,** Երկերի լիակատար ժողովածու, հ. 4, Երևան, Պետ հրատ., 1930:
9. **ԴՎ - Դեմիրճյան Դ.,** Վարդանանք, Երևան, 1987:
10. **ՀԼԴԲ - Սուքիասյան Ա., Գալստյան Ս.,** Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևանի համալս. հրատ., 1975:
11. **ՆՊ - Նար - Դոս,** Պատմվածքներ, վիպակներ, Երևան, «Լույս» հրատ., 1978:
12. **ГПО - Гончаров И.А.** Обыкновенная история.- М.: Худ. лит., 1968.
13. **РАФРС - Квеселевич Д.И.** Русско-английский фразеологический словарь.- М., 1998.
14. **ERPhD - Кунин А.В.** Англо-русский фразеологический словарь.- М.: Совет. энциклопедия, 1982.
15. **GJW - Galsworthy J.** The White Monkey, "FL Publ. House".- М., 1956.
16. **САС - Cronin A.J.** The Citadel.- М., 1957.
17. **САН - Cronin A.J.** Hatter's Castle. – М., FL Publ. House, 1963.
18. **LJM - London J.** Martin Eden.- М., 1953.
19. **ՕԵ - Օսյան Ե.,** Երկերի ժողովածու, Ե., 1935:
20. **ՄԳ - Մուրադյան,** Գևորգ Մարգարյանի, Ե., 1957:
21. **ТИТ - Тургенев И.С.** Три встречи.- Л., 1979.
22. **ДФУ - Достоевский Ф.М.** Бедные люди. Униженные и оскорблённые.- М., 1974.

А.З. КАЗАРЯН

**СЕМАНТИЧЕСКОЕ ПОЛЕ ФРАЗЕОЛОГИЗМОВ, ВЫРАЖАЮЩИХ
НАДЕЖДУ, РАЗОЧАРОВАНИЕ, ОЖИДАНИЕ, ПРЕДЧУВСТВИЕ
В АРМЯНСКОМ, РУССКОМ И АНГЛИЙСКОМ ЯЗЫКАХ**

Рассматриваются фразеологизмы, выражающие надежду, разочарование, ожидание и предчувствие в армянском, русском и английском языках. Исследуются, анализируются и сопоставляются общности и различия семантических, структурных, грамматических и стилистических особенностей фразеологизмов данных языков, что, в свою очередь, способствует выявлению общностей и различий языкового мышления народов-носителей рассматриваемых языков.

Ключевые слова: фразеологизм, значение, особенность, общность, различие, языковые мышление.

H.Z. GHAZARYAN

**SEMANTIC FIELD OF THE ARMENIAN, RUSSIAN AND ENGLISH
PHRASEOLOGICAL UNITS EXPRESSING HOPE, DESPAIR,
EXPECTATION, PREMONITION**

The semantic, structural, grammatical, stylistic peculiarities of Armenian, Russian and English phraseological units, expressing hope, despair, expectation, premonition are studied. The similarities and differences of the peculiarities of the considered units are investigated analyzed and contrasted. This, in its turn, helps to reveal the similarities and differences in the linguistic thinking of the peoples speaking the mentioned languages.

Keywords: phroselological unit, meaning, equivalent, peculiarity, similarity, difference, linguistic thinking.